24.11.26 - 24.11.26
14:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ պրոֆեսոր Լյուդվիգ Ղարիբջանյանի անվան պատմության թանգարան

Ս.թ. նոյեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ին, ԵՊՀ պրոֆեսոր Լյուդվիգ Ղարիբջանյանի անվան պատմության թանգարանում տեղի կունենա «Սորբոնից Երևանի համալսարան» խորագրով ժամանակավոր ցուցադրության բացման հանդիսավոր արարողությունը՝ նվիրված մեծ լեզվաբան Հրաչյա Աճառյանի ծննդյան 150-ամյակին, նրա համալսարանական գործունեությանը, գիտամանկավարժական վաստակին, Երևանի պետական համալսարանի պատմության մեջ ունեցած կարևոր դերակատարությանը:

Միջոցառման ընթացքում առանձին անդրադարձ կարվի Հր. Աճառյանի և Հ. Թումանյանի նամակագրությանը, հայկական համալսարանի ստեղծման վերաբերյալ նրանց մտահոգություններին:

Կներկայացվեն լեզվաբանի գիտամանկավարժական գործունեությունը համալսարանում, դասավանդած առարկաները, գիտական աշխատանքը, գործընկեր դասախոսների և ուսանողների հետ ունեցած հարաբերություններն ու շփումները, ինչպես նաև Հր. Աճառյանի դեմ ուղղված մեղադրանքներն ու ձերբակալությունը:

Գիտնականի կերպարը բացահայտելու համար կներկայացվեն նաև ուսանողների հուշերում և գրառումներում պահպանված զվարճալի պատմություններն ու անեկդոտները:

Կցուցադրվեն Աճառյանի «Առտիալի» (Սուչավա) բարբառի աշխատության բնօրինակ էջերը, թանգարանում պահվող «Հայերեն արմատական բառարանի» պատճենը (ֆաքսիմիլային վերատպություն), լեզվաբանին պատկանող մի շարք անձնական իրեր:

Մուտքն ազատ է:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am